ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1955 Общественные науки

Հ. Մելիքյան

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԼՈՌՈՒՄ 1905 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐ—ՆՈՅԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

1905 թվականի աշնան սկզբներին ռևոլյուցիոն շարժումն ընդգրկել էր ամբողջ Ռուսաստանը։ Շարժումն աճում էր հսկայական ուժով։ Սեպտեմբերի կեսերին Մոսկվայում սկսվեց տպագրիչների գործադուլը, որն անցավ Պետերբուրգ և մի շարք ուրիշ քաղաքներ և դարձավ ընդհանուր քաղաքական գործադուլ։ Հոկտեմբերի սկզբին Մոսկվայում սկսվեց երկաթուղային բանվորների վիթխարի գործադուլը։ «Հոկտեմբերյան քաղաքական գործադուլը դարձավ համառուսաստանյան, ընդգրկելով համարյա ամբողջ երկիրը՝ ընդհուպ մինչև ամենահեռավոր ռայոնները, ընդգրկելով համարյա բոլոր բանվորներին՝ ընդհուպ մինչև ամենահետամնաց խավերը»[1]։ Այդ գործադուլին մասնակցում էին մոտ մեկ միլիոն արդյունաբերական բանվորներ, չհաշված երկաթուղայիններին, փոստ-հեռագրատան ծառայողներին և ուրիշների։

Հոկտեմբերյան գործադուլը, որը ցույց տվեց պրոլետարական շարժման հզորությունը, ստիպեց ցարին հանդես գալ հոկտեմբերի 17-ի հայտնի մանիֆեստով։

Հոկտեմբերյան քաղաքական գործադուլը լայն արձագանք գտավ նաև Անդրկովկասում։ Բանվորական հուժկու ելույթներ տեղի ունեցան Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում և այլ արդյունաբերական կենտրոններում։

Հոկտեմբերի 16-ին անդրկովկասյան երկաթուղին Բաթումից մինչև Բաքու, իր բոլոր ճյուղերով բանվորական գործադուլի պատճառով դադարեց աշխատելուց[2]։

Լոռու երկաթուղային բաժանմունքը, որի մեջ մտնում էին Այրում, Հաղպատ, Ախթալա, Սանահին, Ֆոլադերան կայարաններն ու կիսակայարանները, նույնպես միացավ գործադուլին։ Գործադուլավորների առջևից ընթանում էին Սանահինի դեպոյի բանվորները։

Հոկտեմբերի 14-ին Անդրկովկասյան երկաթուղայինների Միության բյուրոն բաց թողեց մի թռուցիկ, որի մեջ ասվում էր.

«Ընկերներ. համբերության բաժակը լցվեց։ Երկաթուղայինների Համառուսաստանյան Միությունը համոզվելով, որ բանակցությունները բյուրոկրատիայի հետ ոչ մի արդյունք չեն տալիս, հայտարարեց ընդհանուր գործադուլ։ Երկար ժամանակ ոստիկանական-բյուրոկրատական ռեժիմի ծանր լծի տակ երկաթուղայինների խոշտանգված բազմաքանակ բանակը ցնծությամբ արձագանքեց այդ կոչին, գիտակցելով վերջապես, որ միայն եռանդուն պայքարի ճանապարհով նա կարող է հասնել մարդկային պայմանների իրականացմանը։ Գործադուլին մինչև այժմ միացել են 21 ուղի-

[1] Համկ(բ) Պ Պատմություն, համառոտ դասընթաց, էջ 104։
[2] Տես ЦГИА Груз. ССР, фонд 26 с, дело 6, л. 200.

ներ, բորբոքվում են բողոքի կայծերը, ընդդիմում են էլ ավելի մեծ թվով ուղիներ և աստիճանաբար մոտենում են մեզ։ Համառուսաստանյան Միությունը հեռագրով խնդրում է անցնել գործադուլավորների կողմը։

Ընկերներ, արձագանքենք այդ կոչին, աջակցենք մեր եղբայրներին և բոլոր երկաթուղայիններին կողմից առաջ քաշված պահանջներին։

Գիտակցենք վերջապես, որ վրա է հասնում վիթխարի նշանակություն ունեցող մոմենտը, պատմական մոմենտը մեր ուռնահարված իրավունքների համար ակտիվ պայքարի ժամը և եթե մենք բաց թողնենք այդ մոմենտը, ապա մենք երկար ժամանակ չենք ստանա ոչ միայն քաղաքացիական ազատություն, այլ անգամ գոյության փոքր ի շատե պայմաններ։ Թող ձեզնից յուրաքանչյուրը զինվի գիտակցությամբ, որ այժմ ինչ գնով էլ, որ ուզում է լինի մենք պետք է գործադուլ անենք...

Եվ այսպես, մենք գործադուլ ենք անում։ Այսօր մենք կաշխատենք սովորականի պես, իսկ վաղը մեզանից ոչ ոք չպետք է աշխատի...

Հառաջ ընկերներ, համարձակ, համերաշխ, հառաջ.

Ամուր մեկնենք մեր ձեռքը ընդդեմ կամայականության։ Մոտ է բազմամյա ստրկությունից ազատագրվելու ժամը, մոտ է ժամը, երբ բազմամիլիոն երկաթուղային բանվորները կհանգստանան կամայականությունից, ճնշումից ու բռնություններից...

Հառաջ ընկերներ, միության մեջ է ուժը»[1]։

ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտեի և Բորչալուի կազմակերպության ջանքերով, այդ կոչը լայնորեն տարածվում է նաև Լոռու երկաթուղային բանվորների շրջանում, նպաստում նրանց ներգրավմանը համառուսական քաղաքական գործադուլի մեջ։

Ինչպես ամբողջ Հայաստանի, այնպես էլ Լոռու երկաթուղային բանվորների ռևոլյուցիոն շարժման ծավալման գործում պակաս կարևոր դեր չկատարեց ՌՍԴԲՊ Ալեքսանդրապոլի կոմիտեի հոկտեմբերի 16-ի թռուցիկը, որը սոցիալ-դեմոկրատ երկաթուղայինների, բանվորների միջոցով տարածվեց Սանահինի դեպոյի և Լոռու երկաթուղային կայարանների բանվորների մեջ։ Այդ թռուցիկում ասվում էր.

«Ընկերներ. մենք՝ Դեպոյի և Ալեքսանդրապոլ կայարանի ծառայողներս, միանալով ռուսական երկաթուղայինների ընդհանուր գործադուլին, հայտնում ենք, որ մենք ընդունել ենք բոլոր գործադուլավորների ընդհանուր որոշումը՝ գործի չանցնել, մինչև չբավարարվեն... մեր այն պահանջները, որոնք գրավոր են հանդիսանում Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդների բարեկեցության»[2]։

Գործադուլի ընթացքում, որը տևեց հոկտեմբերի 16-ից մինչև 29-ը[3] ՌՍԴԲՊ Բորչալուի կազմակերպության ղեկավարությամբ տեղի էին ունենում Լոռու երկաթուղային բանվորների ու ծառայողների միտինգներ, ժողովներ, որտեղ բանվորները առաջադրում էին իրենց պահանջները, մերկացնում ցարական չինովնիկների ու ոստիկանության գործունեությունը։ Երկաթուղայինների այդ միտինգները ընթանում էին «Կորչի ցարական

---

[1] ՀԿՊ կենտկոմի արխիվ, ֆ. 39, գ. 10, թ. 24։
[2] ЦГИА Груз. ССР. ф. 26с, д. 6, л. 37.
[3] Там же, ф. 26 с, д. 6., л. 900.

ինքնակալությունը», «Կեցցե՛ Սահմանադիր ժողովը», «Կեցցե՛ դեմոկրատական ռեսպուբլիկան», «Կեցցե՛ սոցիալիզմը», «Կեցցե՛ ՌՍԴԲՊ-ն» լոզունգներով։ Բանվորական այդ միտինգների մասին Սանահինի կայարանի հին բանվոր, 1904 թ. ՌՍԴԲՊ Սանահինի կազմակերպության անդամ ընկ. Ս. Սոդոմոնյանը հիշում է. «Ռևոլյուցիայի տարիներին և հատկապես 1905 թ. հոկտեմբեր—դեկտեմբեր ամիսներին դրությունը, իհարկե, փոխվել էր։ Ռևոլյուցիայից սարսափած ցարիզմը չէր համարձակվում գործով արգելելու մեր միտինգներն ու ժողովները։ Հիմա արգեն մենք ոչ միայն չէինք վախենում խմբերով հավաքվել ու մեր վիճակից խոսել, այլ բանվորական բազմամարդ միտինգներում մեր «Կորչի ցարական ինքնակալությունը» լոզունգը սարսափ էր ազդում Լոռում ծվարած ցարական լաքեյներինը»[1]։

Երկաթուղային բանվորների տեղական բոլշևիկյան կազմակերպություններից Լոռում առանձնահատուկ կարևոր դեր էր կատարում ՌՍԴԲՊ Սանահինի դեպոյի և կայարանի կազմակերպությունը, որի գլխավորությամբ ստեղծված գործադուլային կոմիտեն ամբողջ գործադուլի շրջանում փաստորեն դարձել էր դրության տերը, իր վրա վերցնելով գործադուլի ղեկավարությունը Սանահինում և շրջակա կայարաններում ու կիսակայարաններում։ Գործադուլային կոմիտեի փաստական տնօրենության տակ էին գտնվում Սանահինի դեպոն, այնտեղ գտնվող բոլոր շոգեքարշերը և Այրում, Ախթալա, Հաղպատ, Քոլադերան, Շանալի կայարանները՝ իրենց երկաթուղային սարքավորումով։ Գործադուլային կոմիտեին հաջողվեց իր ձեռքը վերցնել նաև Սանահին կայարանը։ Սանահինում ստեղծված գործադուլային կոմիտեն իրականացնում էր բանվորների դեպուտատների տեղական Սովետի ֆունկցիաները։ Հոկտեմբեր—դեկտեմբեր ամիսներին Սանահինի գործադուլային կոմիտեն, որտեղ ղեկավար դեր էին կատարում բոլշևիկները, Ռուսաստանի բանվորական կենտրոններում առաջ եկած Սովետների օրինակով, գործում էր որպես փաստական իշխանություն։

Երկաթուղու տեղական վարչությունը և կայարանին ամրացված ոստիկանությունը վախից մի կողմ էին քաշվել, մեկուսացել։

Գործադուլի շրջանում ՌՍԴԲՊ Սանահինի կազմակերպության և գործադուլային կոմիտեի ակտիվ գործունեության մասին է վկայում կազմակերպության հոկտեմբերի 15-ի հեռագիրը Անդրկովկասյան վարչությանը և Կովկասյան երկաթուղային բյուրոյին, որի մեջ նրանք հաղորդում էին բանվորական միտինգի որոշումը՝ կայարանի պետ, բանվորներին ատելի Մաքսիմովսկուն աշխատանքից հեռացնելու վերաբերյալ։

«Ծառայողների և բանվորների կողմից պահանջված է եղել,— ասված է այդ հեռագրում,— Սանահին կայարանի պետ Մաքսիմովսկուն հեռացնելու մասին, բայց մինչև այժմ այդ պահանջը չի կատարված։

Հետևողականորեն պահանջում ենք Մաքսիմովսկու հեռացումը։

ՌՍԴԲՊ Սանահինի ռայոնական կազմակերպությունը»[2]։

---

1 ՀԿՊ կենտկոմի արխիվ, ֆ. 40, գ. 5, թ. 4։

2 ЦГИА Груз. ССР, ф. 26с, д. 6., л. 36.

Գործադուլի ընթացքում սոցիալ-դեմոկրատիայի ջանքերով Անդրկովկասում ստեղծվել էր երկաթուղայինների Համաանդրկովկասյան բյուրո, որը կոորդինացնում էր երկաթուղայինների ռևոլյուցիոն շարժումները ամբողջ երկրամասում։ Կոմիտեի հետ տեղական, այդ թվում և Լոռու երկաթուղայինները մշտական կապ էին պահպանում և ղեկավարություն ստանում։ Գործադուլի ընթացքում անդրկովկասյան երկաթուղայինների խորհրդակցությունների մասնակցելու համար, մյուս խոշորագույն կենտրոնների օրինակով, Սանահինի գործադուլային կոմիտեն առանձնացրել էր «Պատգամավորական գնացք», որի միջոցով կապ էր պահպանվում Թիֆլիսի հետ։ Այդ գնացքում տեր ու տնօրենը երկաթուղային բանվորներն էին[1]։

Հոկտեմբերի վերջերին Անդրկովկասյան երկաթուղային բյուրոյի կարգադրությամբ աշխատանքը երկաթուղում վերսկսվում է, սակայն երկաթուղայինների ռևոլյուցիոն պայքարը ցարիզմի դեմ չի դադարում։ Բանվորները խախտում էին գնացքների կանոնավոր երթևեկությունը, բոլոր հնարավոր միջոցներով արգելակում երկաթուղու աշխատանքը։ Նրանք տասնյակ մետրերով հանում էին երկաթուղային ռելսերը, ժայռեր էին փլցնում գծի վրա, բաց էին թողնում շոգեքարշի գոլորշին, գնացքների ընթացքի ժամանակ անջատում էին վագոնները, փչացնում, երթևեկության համար անպետք էին դարձնում շոգեքարշերը, վագոնները, նրանցից հանելով կարևոր մասերը, կտրատում էին հեռախոսալարերը, փչացնում էին սեմաֆորը և այլն։

Այդ բոլորը հաճախ պատճառ էին դառնում ապրանքատար, փոստային, երբեմն նաև ռազմական գնացքների խորտակմանը[2]։ Այդպիսի մի շարք խորտակումներից հատկապես նշանավոր է հոկտեմբերյան քաղաքական գործադուլի նախօրյակին, հոկտեմբերի 14-ի լույս 15-ի գիշերը Ալավերդու և Ախթալայի միջև՝ Թիֆլիսից Կարս՝ 98-րդ վերստի վրա տեղի ունեցած 134-րդ գնացքի խորտակումը, որի ժամանակ ոչնչացավ շոգեքարշը 8 վագոնների հետ միասին, պետությանը հասցնելով 18.552 ռուբլու նյութական վնաս[3]։

Գնացքի խորտակման հետևանքով մի քանի օր շարունակ գծի նորմալ աշխատանքը չէր վերականգնվում։ Ամսի 16-ից գործադուլ հայտարարած Սանահինի և Լոռու այլ կայարանների բանվորները վճռականորեն հրաժարվում էին վերականգնել գիծը։

Կայարանների բուֆետների աշխատողները, որոնք նույնպես միացել էին գործադուլավոր բանվորներին, հրաժարվում էին սպասարկել այլ վայրերից գիծը նորոգելու համար կանչված զինվորներին և անձանց։ Վերականգնման գործով զբաղվող չինովնիկը հեռագրով խնդրում էր «Թիֆլիսից ուղարկել արտակարգ գնացք... Դա անհրաժեշտ է,— ավելացնում էր նա,— որովհետև բուֆետապահը բուֆետը փակել է և խանութպանները ոչ ոքի մթերք չեն բաց թողնում...»[4]։

Արխիվային փաստաթղթերից և բանվորների հիշողություններից երե-

---

[1] ՏԵՍ ՀԿՊ կենտկոմի արխիվ, ֆ. 40, դ. 3, թ. 11—12։

[2] ՏԵՍ ЦГИА Груз. ССР, ф. 279, д. 2148, ф. 26 с., д. 6, л. 186, 188. „Кавказ" за 1905 г. №№ 56, 105, 133, 227.

[3] ՏԵՍ Там же, ф. 279, д. 2148.

[4] ЦГИА Груз. ССР, ф. 279, д. 2148. л. 7.

վում է, որ Լոռու երկաթուղային բանվորները մասնակից գործադուլներ են արել նաև հետագայում։ Դրանցից նշանավոր էր հատկապես նոյեմբերի 19-ին և 20-ին տեղի ունեցած գործադուլը, որի առիթը երկու գործադուլավոր բանվորներին՝ Վորոբյովին և Մսխելաձեին աշխատանքից հեռացնելն էր։

Տարբեր ազգերի բանվորներն իրենց համերաշխ պայքարով ստիպեցին Անդրկովկասյան երկաթուղային վարչությանը՝ վերականգնել այդ բանվորներին իրենց աշխատանքում։

«Իմանալով վերջիններիս հեռացման մասին,— ասվում է գրագրություններից մեկում,— Սանահին կայարանի դեպոյի և երթևեկության բոլոր ծառայողները նոյեմբերի 19-ի ժամը մոտ մեկին հրաժարվեցին աշխատանքից և գնացքների բաց թողնելուց, մինչև Վորոբյովին ու Մսխելաձեին նորից աշխատանքի ընդունելը. այդ բանը շարունակվեց մինչև երեկոյան ժամը 11-ը, քանի դեռ Թիֆլիսից չէր ստացված հաղորդագրություն՝ նրանց ծառայության մեջ թողնելու վերաբերյալ...»[1]։

Սանահինում տեղի ունեցող բանվորական միտինգներին, ժողովներին մասնակցում էին նաև հարևան Ուզունլար, Այգեհատ, Աքորի, Հագվի և այլ գյուղերի զինված գյուղացիները, որոնք այստեղ էին գալիս տեղական բոլշևիկյան կազմակերպությունների նախաձեռնությամբ և նրանց ղեկավարությամբ։

Ռևոլյուցիան կոփում էր Լոռու բանվորների ու գյուղացիների դաշինքը՝ ռևոլյուցիայի հաղթանակի վճռական պայմանը։

Նոյեմբերի 20-ին Սանահինի գործադուլավոր բանվորներն ու ծառայողները հարևան Քոլագերան, Շահալի կայարանների բանվորների և շրջակա գյուղերի զինված գյուղացիների հետ միասին կարմիր դրոշակով, ռևոլյուցիոն երգեր երգելով գնում են Ալավերդի, ուր մոտ 5000 բանվորների հետ միասին՝ բոլշևիկների ղեկավարությամբ կազմակերպվում է Լոռու բանվորների ու գյուղացիների նոյեմբերի 20-ի նշանավոր քաղաքական ցույցը, որը Ալավերդու նոյեմբերյան քաղաքական գործադուլի կարևորագույն դրվագներից մեկն է։

Վ. Ի. Լենինը գրում էր. «1905 թվականի հոկտեմբերն ու դեկտեմբերը նշանավորում են ռուսական ռևոլյուցիայի վերընթաց գծի բարձրագույն կետը։ Ժողովրդի ռևոլյուցիոն ուժի բոլոր աղբյուրները բացվեցին էլ ավելի լայն կերպով, քան առաջներում»[2]։

Զինված ապստամբությունը նախապատրաստելու նպատակով բոլշևիկների առաջ քաշած լոզունգները՝ համառուսական քաղաքական գործադուլի, 8-ժամյա բանվորական օրվա, գյուղացիական ռևոլյուցիոն կոմիտեների և բանվորներին զինելու վերաբերյալ, մասսաներին մոտեցնում էին զինված ապստամբությանը։ Ցարիզմը գրոհով տապալելու բոլշևիկյան դիրքորոշումը գնալով տիրապետում էր մասսաներին, դառնում անհետաձգելի անհրաժեշտություն։

Ամբողջ Ռուսաստանում տիրող ռևոլյուցիոն իրադրության և հատկապես Հոկտեմբերյան համառուսական քաղաքական գործադուլի անմիջա-

---

[1] ЦГИА Груз. ССР, ф. 26 с., д. 6, л. 3а.

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 23, էջ 327։

կան բարերար ազդեցությամբ՝ 1905 թ. նոյեմբերի վերջերին, ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի Կովկասյան և տեղական կազմակերպությունների անմիջական ղեկավարությամբ, մասսայական քաղաքական գործադուլ ծավալվեց նաև Ալավերդում։ Այդ գործադուլը, որը Հայաստանի և մասնավորապես—Լոռու բանվորների ռևոլյուցիոն շարժման պատմության մեջ ունի իր ուրույն տեղը, հանդիսանում է Ալավերդու բանվորների հոկտեմբերյան մասնակի գործադուլների օրգանական շարունակությունը։

«Կավկազսկիյ ռաբոչիյ լիստոկ» բոլշևիկյան լրագիրը, նկարագրելով նոյեմբերյան գործադուլի շրջանում Ալավերդու գործարաններում տիրող դրությունը և բանվորների վիճակը, գրում էր.

«... Գործարանը չի դիմանում ոչ մի քննադատության— ոչ հիգիենայի տեսակետից, ոչ ներքին կարգի տեսակետից։ Չկա այնտեղ ոչ կանոնավոր բաղնիք, ոչ բնակարաններ, այլ նրանց փոխարեն իսկական շնաբներ, որտեղ տեղավորվում են 20—25-ական մարդ։ Աշխատավարձը տրվում է 2—3 ամիսը մեկ անգամ, կոպիտ վերաբերմունք, մշտական տուգանքներ ըստ լրտեսների զեկուցումների և այլն։ Ահա Ալավերդու գործարանի պատկերը»։

Մինչև նոյեմբերյան գործադուլի սկսվելը բոլշևիկները մեծ աշխատանք էին ծավալել բանվորների շրջանում. Բանվորներին պարզաբանվում էին նրանց տնտեսական և քաղաքական դրության պատճառները, ցույց էր տրվում բանվոր դասակարգի դեմ ցարիզմի ու բուրժուազիայի միասնական շահերը, վեր էր հանվում բանվորական ծախու արիստոկրատիայի դավաճանական էությունը։ Ընդհատակյա բանվորական ժողովներում, որոնք տեղի էին ունենում ոստիկանության, բանվորների մեջ վխտացող լրտեսների և դավաճանների աչքից հեռու, բոլշևիկները քննարկման էին դնում գործարանի վարչությանը առաջիկայում ներկայացվող պահանջները։

Նոյեմբերի 20-ին աշխատանքը դադարեցրին հանքերի և գործարանների գրեթե բոլոր բանվորները։

Նախօրոք գործարանների ու հանքերի առաջավոր բանվորները, տեղական սոցիալ-դեմոկրատական կոմիտեի անմիջական ղեկավարությամբ ընտրել էին գործադուլային կոմիտե։ Հին բանվորների վկայությամբ, այդ կոմիտեի մեջ մտնում էին առաջավոր բանվորներ՝ Վլադիմիր Զելիձեն, Սերգո Փիրուզյանը, Զալ բանվորը (իսկական անուն ազգանունը չի հիշվում. բանվորները նրան ճանաչում էին այդ անվամբ), Ալեքսանդր Դեգորիանին, Մեխակ Ադայանը, Միրզա Կաֆարը, Նիկոլայ Զաֆարովը և ուրիշները[2]։ Նրանց մի մասը ս. դ. կազմակերպության անդամներ էին։

ՌՍԴԲՊ տեղական բոլշևիկյան կազմակերպությունը, գործադուլային կոմիտեն, ականավոր ռևոլյուցիոներ Մելիք Մելիքյանի (Դեդուշկա) և ՌՍԴԲՊ Կովկասյան Միութենական կոմիտեի կողմից Լոռուն ամրացված պրոպագանդիստ-կազմակերպիչների հետ միասին կազմում են գործադուլավոր բանվորների պահանջները։ 22 կետից բաղկացած այդ պահանջները թերթիկի ձևով բազմացվում է և տարածվում բանվորների մեջ։ Գործադուլային կոմիտեն այն ներկայացնում է գործարանի վարչությանը «մինչև բավարարելը աշխատանքի չանցնել» պայմանով։

[1] „Кавказский рабочий листок", 1905, 30 ноября, № 6.
[2] Տես ՀԿՊ Կենտկոմի արխիվ, ֆ. 10, դ. 5, թ.108։

Անհրաժեշտ ենք համարում՝ չնչին կրճատումներով մեջ բերել այդ վաստակաթուղթը։

«Բանվորների պահանջները

1. Ութը ժամյա բանվորական օր։

2. Աշխատավարձի հավելում 20 տոկոսով։

3. Օրավարձ բանվորներին՝ 1 ռ.։

4. Բանվորական տեսչություն, որի պարտականությունը կլինի բանվորների և արհեստավորների ընդունումն ու հեռացումը, նրանց աշխատավարձի ավելացումն ու նշանակումը։

5. Տուգանքների վերացում։

6. Շլեյդհոֆենի (պղնձի ձուլման վերջին ստադիայի վառարանը—Հ. Մ.) վրա բանվորների թիվը ավելացնել 4 մարդով, այնպես որ բոլորը միասին լինեն 8 մարդ և ընկերության հաշվին նրանց տալ գոգնոցներ ու ձեռնոցներ։

7. Հիվանդացող բանվորներին բուժել ընկերության հաշվին և վճարել լրիվ աշխատավարձ մինչև նրանց առողջանալը։

8. Բոլոր բանվորներին տալ տարեկան մեկ ամսվա արձակուրդ։

9. Վառարանի և կոնվերտորի վրա օգնականներին նշանակել նախկին աշխատավարձը...

10. Բարձր պաշտոնյաները ստորիններով փոխարինելիս, տարբերությունը վճարել աշխատավարձից դուրս։

11. Վերականգնել պղնձի համար վառարանի վրա աշխատող վարպետների մրցանակը և տալ անցյալ երկու ամսվա հասանելիքը, որը չգիտես ինչու, վերացրել են։

12. Մեխանիկական բաժնում ծառայողների շտատը ավելացնել երկուսով։

13. Գործարանում ավելացնել լուսավորությունը...

14. Տոն օրերին դադարեցնել աշխատանքները և, եթե այդ հնարավոր չէ, ապա մի ժամը հաշվել 2։

15. Յուրաքանչյուր 4 բանվորին հատկացնել մի սենյակ և ապահովել այն լուսավորությամբ ու վառելիքով։

16. Վերացնել վճարը գնման գրքույկի (Заборная книжка) դիմաց (20 կ.)։

17. Կառուցել երեք բաղնիք...

18. Հաստատել աշխատավարձը ամսական երկու անգամ վճարելու կարգ։

19. Գործարանի վերանորոգման և գործադուլի ժամանակ բոլորին վճարել լրիվ աշխատավարձ և չհեռացնել բանվորներին գործադուլի համար։

20. Ամեն օր գրասենյակում կախել անվանատախտակը։

21. Հեռացնել. 1) Նիկոլայ Արաջևին, 1) Ահմեդ Ստեփանովին, 2) Սավինո Չեգերանուն, 4) Եմելյանովին, 5) Սալեյ Արդուլային և 6) Ագա Մահմեդ-Աղային։

22. Մինչև բավարարելը չանցնել աշխատանքի։

Կեցցե ՌՍԴԲՊ»[1]։

Ալավերդու բանվորների գործադուլին իրենց եղբայրական համերաշխությունը արտահայտեցին երկաթուղու Լոռու բաժանմունքի և առաջին հերթին Սանահինի դեպոյի ու կայարանի բանվորները, ինչպես նաև հարևան գյուղերի աշխատավոր գյուղացիները։

Նոյեմբերի 28-ին, երբ Սանահինում հայտնի դարձավ Ալավերդու բանվորների մտադրությունը, Սանահինի և հարևան կայարանների գործադուլավոր բանվորները՝ շրջակա Աքորի, Ուզունլար, Այդեհատ, Հագվի և այլ գյուղերից Սանահին եկած զինված գյուղացիների հետ միասին, կանոնավոր շարքերով, կարլ Մարքսի նկարը կրող կարմիր դրոշակով, տեղական բոլշևիկյան կազմակերպության ղեկավարների հետ միասին, ուղևոր-

[1] ՀԿՊ կենտկոմի արխիվ, ֆ. 40, գ. 3, թ. 29—30։

վեցին Ալավերդի, որտեղ և հենց նույն օրը աշխատավորական հզոր ցույց կազմակերպվեց[1]։ Սանահին կայարանի ցույցին մասնակից բանվորներից մեկն իր հիշողություններում պատմում է.

«Մինչև Ալավերդի հասնելը մեզ դիմավորեց գործարանի բանվորների կողմից ուղարկված դելեգացիան։ Ջերմ հանդիպումից հետո մենք հասանք Ալավերդի, որտեղ գործարանի բակում... տեղի ունեցավ Ալավերդու, Սանահինի բանվորների և հարևան գյուղերի գյուղացիների բազմամարդ միտինգը։ Մինչև մեր գնալը Ալավերդի էին եկել նաև Հաղպատ, Սանահին, Սրնակ և այլ գյուղերի գյուղացիները։

Լոռին իր ամբողջ պատմության մեջ չէր տեսել այդպիսի դեպք. միտինգում բանվորներն ու գյուղացիները, բոլշևիկ հռետորները հայերեն, ռուսերեն, վրացերեն, ադրբեջաներեն, պարսկերեն, հունարեն ճառեր ասացին։

Նրանք մերկացնում էին ցարական ռեժիմը, խարազանում կալվածատերերի ու կապիտալիստների վայրենի, անսիրտ կամայականությունները... Այդ միտինգում կային շատ բանվորներ, որոնք զենք ունեին...»[2]։

Պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի ներքո տեղի ունեցող այդ բազմահազարանոց ցույցում բանվորներն իրենց վճռական բողոքն էին հայտնում ցարիզմի ջարդարար քաղաքականության դեմ, ցարիզմ, որը Անդրկովկասում հրահրել ու կազմակերպել էր հայ-թաթարական արյունալի կոտորածը։

Հռետորներն իրենց ելույթներում մերկացնում էին հայկական բուրժուա-նացիոնալիստական պարտիաների և, առաջին հերթին, դաշնակցության նողկալի դեմքը։ Նրանք բազմաթիվ փաստերով ցույց էին տալիս թե ինչպես «սոցիալիստական» ֆրազեոլոգիայով պճնված բուրժուական լակեյները ամեն կերպ ձգտում էին պառակտել բանվորական շարժումը, կազմալուծել տարբեր ազգերի բանվորների ու գյուղացիների եղբայրական դաշինքը։

Արդեն գործադուլը փաստ էր դարձել։ Գործարանի դիրեկտոր Պոլմարը հենց նույն օրը՝ նոյեմբերի 20-ին շտապ հաղորդում է Թիֆլիսի ֆրանսիական հյուպատոսին.

«Պարոն հյուպատոս. այսօր երկաթուղու բանվորները և ծառայողները, ուղեկցությամբ զինված անձնավորությունների, որոնք, ինչպես ասում են, պատկանում են շրջակա գյուղերի քաղաքական կոմիտեներին (խոսքը ՌՍԴԲՊ տեղական բոլշևիկյան կոմիտեների մասին է—Հ. Մ.), եկան Սանահին կայարանից՝ Մանես գործարանում աշխատանքները դադարեցնելու նպատակով և արդյունքը եղավ այն, որ կանգնեցրին մեր գործարան Պիրվոիկը... Այդ մարդիկ նախազգուշացրին, որ իրենք կկանգնեցնեն մեր ամբողջ աշխատանքը, և որ նրանք պահանջներ կներկայացնեն 8-ժամյա բանվորական օրվա, աշխատավարձի բարձրացման և այլնի մասին...

Ես Ձեզ տափազանց պարտական կլինեմ, եթե Դուք մասնակցություն ցույց տաք և նշեք, թե ես ում պետք է դիմեմ օգնության համար, առա-

[1] Տես ЦГИА Груз. ССР, ф. 26 с, д. 6, л. 691. Այդ ցույցի մասին տես նաև ՀԿՊ ԿԿ արխիվ, ֆ. 40, գ. 5, Ալավերդու գործադուլավոր բանվոր Ի. Խառատյանի (թ. 109) և Սանահինի կայարանի բանվոր Ս. Սողոմոնյանի հիշողությունները։

[2] ՀԿՊ ԿԿ արխիվ, ֆ. 40, գ. 5, թ. 17—18, տես նաև ֆ. 40, գ. 5, թ. 109։

ցացած դժգոհություններին գոհացում տալու նպատակով, քանի որ մեր գործերին քաղաքական խմբերի և օտար բանվորների միջամտության հետևանքով գործարանի կանգնեցումը վերջ ի վերջո ընկերության համար կարող է ճակատագրական լինել»[1]։

«Առաջացող դժգոհություններին գոհացում տալու, ուշացած աշխատավարձը վճարելու նպատակով» Պոլմարը մի այլ հեռագրով հյուպատոսության աշխատակիցներից մեկին խնդրում էր կապվել Մոսկվա՝ Ալավերդու ֆրանսիական կամպանիայի հետ առևտրական հարաբերություններ ունեցող Վոգաու ընկերության վարչության հետ և նրան ներկայացնել փոխանցման «հետևյալ հրամանը», «Մոսկվա, Վոգաու. հոկտեմբեր—նոյեմբերի մատակարարումների գիմաց փոխանցեցեք բոլոր գումարները. Պոլմար»[2]։

Գործադուլը գնալով «վճռական ընթացք» է ստանում։ Ալավերդի է գալիս Բորչալուի գավառապետը[3]։

Գործադուլի երկրորդ օրը՝ նոյեմբերի 21-ին, Պոլմարը ֆրանսիական հյուպատոսին ուղարկում է իր երկրորդ տագնապալի նամակը, որի մեջ յուրովի արտացոլվում է 1905 թ. նոյեմբերին Լոռու բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժման թափը։

«Պարոն հյուպատոս,— գրում է Պոլմարը,— ինչպես ես գրել էի Ձեզ, երեկ, մեր բանվորների գործադուլը, որը ընդունել է վճռական ընթացք, մեզ մոտ հայտարարվեց երկաթուղու ծառայողների կողմից և աջակցություն ստացավ շրջակա հայկական 4 գյուղերի տեղական զինված ուժերի կողմից, մարդիկ, որոնք բացարձակապես ոչ մի հարաբերություն չունեն մեր ընկերության հետ։

Այս գործադուլը սպառնում է մեր ձեռնարկությունների վերջնական փակմանը»[4]։

Պոլմարը խնդրում էր Ալավերդի ուղարկել հյուպատոսության ներկայացուցիչներին՝ վկա լինելու կատարվող դեպքերին։ «Ես Ձեզ չափազանց շնորհակալ կլինեմ, եթե Դուք հնարավորության դեպքում հյուպատոսությունից այստեղ ուղարկեք պ-րն Շամերեյին՝ հավաստելու համար այս փաստերը, որոնք ես իմ կողմից վավերացնում եմ վկաների ցուցմունքներով»[5]։

Կովկասյան ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի օրգան «Կավկազսկիյ ռաբոչիյ լիստոկ»-ը, որը խմբագրվում էր Ի. Վ. Ստալինի և Ստ. Շահումյանի կողմից, լայնորեն լուսաբանելով Ալավերդու բանվորների նոյեմբերյան գործադուլը, նշում էր գործադուլավորների «տոկունությունը», կանգ առնում այն բանի վրա, որ բանվորները չէին բավարարվում միայն տընտեսական պահանջներ ներկայացնելով և դրանց համար պայքարելով։ Գործադուլի ընթացքում, որը տևեց նոյեմբերի 20-ից 25-ը, բանվորները ամեն օր կազմակերպում էին քաղաքական ցույցեր, միտինգներ։

«Սկզբում,—գրում էր «Կավկազսկիյ ռաբոչի լիստոկ»-ը գործարանի վարչությունը ոչ մի դեպքում չէր ցանկանում զիջումներ կատարել, պատ-

1 ՀԿՊ ԿԿ արխիվ, ֆ. 40, գ. 3, թ. 10։
2 Նույն տեղում, ֆ. 40, գ. 3, թ. 12։
3 Տես ЦГИА Груз. ССР, ф. 26 с, д. 6, л. 691.
4 ՀԿՊ ԿԿ արխիվ, ֆ. 40, գ. 3, թ. 13։
5 Նույն տեղում։

ճառարանելով, որ գործարանը փնասներ է կրում. նա դիմեց անգամ հին միջոցներին (կանչեց պետին, հյուպատոսին և այլն), բայց իզուր։ Բանվորները ամուր կանգնած էին և գործադուլի ամբողջ ընթացքում կազմակերպում էին քաղաքական բնույթի միտինգներ»։

Ալավերդու բանվորների զգալի մասը լավ էր հասկանում, որ բուրժուազիայի թիկունքում կանգնած է ցարական կառավարությունը, որը ամեն կերպ պաշտպանում, հովանավորում է կապիտալիստական շահագործումը։ Բանվորներն զգում էին, որ առանց ցարիզմը տապալելու իրենց առաջադրած տնտեսական պահանջները իրականություն չէին դառնա։

Ալավերդու բանվորների և Լոռու գյուղացիների դաշինքը, որի ամրապնդումը բոլշևիկյան կազմակերպությունների մշտական ուշադրության կենտրոնում էր, աճում էր օրեցօր։ Դեռ մինչև Լոռու բանվորական գործադուլային շարժման ծավալումը՝ տեղական բոլշևիկյան կազմակերպությունները ՌՍԴԲՊ Կովկասյան միութենական կոմիտեի անմիջական ցուցումներով ու ղեկավարությամբ կոփում էին աշխատավոր գյուղացիության և բանվորների եղբայրական դաշինքը։ Ալավերդու գործարանի առաջավոր բանվորները հաճախ էին լինում Լոռվա գյուղերում։ Նրանք գյուղացիներին բացատրում էին իրենց աշխատավորների ազատագրական իսկական ուղին, ցարիզմի, կալվածատերերի և բոլոր տեսակի ու գույնի շահագործողներից ազատագրելու ուղին։ Նրանք Լոռու աշխատավորների մեջ դաստիարակում էին այն մտքը, որ նրանց ազատագրման միակ ուղին պրոլետարիատի հեգեմոնիայով աշխատավոր մասսաների զինված, հերոսական, անձնվեր պայքարն է ցարիզմի ու բուրժուազիայի դեմ։

Ալավերդու բանվորների նոյեմբերյան գործադուլի բնորոշ կողմերից մեկն էլ այն էր, որ հակառակ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների և առաջին հերթին դաշնակցության ջանքերին՝ պառակտելու աշխատավորների ռևոլյուցիոն պայքարը, տարբեր ազգերի բանվորներն ու գյուղացիները հանդես էին գալիս միասնաբար, եղբայրական դաշինքով ընդդեմ ընդհանուր թշնամու։

Անդրադառնալով Ալավերդու բանվորների նոյեմբերյան գործադուլի ժամանակ տարբեր ազգությունների բանվորների միասնական պայքարին՝ «Կավկազսկիյ ռաբոչիյ լիստոկ»-ը գրում էր. «Այստեղ բոլոր ազգությունների բանվորները՝ հայերը, պարսկահպատակ թաթարները, վրացիները և ոուսները կարմիր ռևոլյուցիոն դրոշի ներքո լսում էին հռետորներին, որոնք խոսում էին բոլոր չորս լեզուներով, բացատրում էին բանվորական հարցի էությունը (նրա տնտեսական և քաղաքական կողմերը), քննադատում էին ժամանակակից պետական ռեժիմը... Հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես միատեսակ պայմանները միավորել էին տարբեր ազգությունների բանվորներին, ինչպես այս խուլ անկյունում բանվորները վճռեցին ինչ էլ որ լինի, դիմանալ մինչև իրենց պահանջների բավարարումը»[1]։

Գործադուլավոր բանվորների համերաշխությունը և տոկունությունը պսակվեց հաղթանակով։

---

[1] „Кавказский рабочий листок" 1905, 30 ноября, № 6.

[2] Նույն տեղում, 1905, 30 փետրվարի, № 6։

Գործարանային վարչությունը ստիպված եղավ բանակցելու բանվորական հանձնաժողովի հետ և կոլեկտիվ պայմանագիր կնքվեց գործադուլավոր բանվորների լիազորների ու ֆրանսիական կապիտալիստների միջև:

Բանվորների տարած հաղթանակի մասին «Կավկազսկիյ ռաբոչիյ լիստոկ»-ը գրում էր. «... Բանվորները վճռեցին ինչ էլ լինի դիմանալ մինչև իրենց պահանջների բավարարումը։

Եվ նրանց վճռականությունը հաղթեց. վարչությունը հարկադրված էր հաշտվել իրականության հետ և առաջարկեց բանվորներին իրենց միջից ընտրել հանձնաժողով պայմանների մշակման համար»[1]։

Բանվորական հանձնաժողով ընտրելու վերաբերյալ Պոլմարի առաջարկից հետո Ալավերդու և Շամլուղի գործարանների ու հանքերի բանվորները, բոլշևիկների գլխավորությամբ, իրենց ժողովներում ընտրեցին բանվորական լիազորներ՝ բանակցելու գործարանի դիրեկտորի հետ—հիմք ընդունելով «բանվորների պահանջները»։

Հանքերի գործադուլավոր բանվորների հետ միասին բանվորական լիազորներ ընտրեցին նաև պղնձաձուլական գործարանների բանվորները։ Ընտրական այդ կամպանիան տեղի էր ունենում գործադուլային կոմիտեի անմիջական ղեկավարությամբ, բոլշևիկների ակտիվ մասնակցությամբ։

Պղնձաձուլական գործարանների և հանքերի բանվորներից ընտրված լիազորները գործադուլային կոմիտեի հետ միասին փաստորեն իրականացնում էին բանվորների դեպուտատների սովետի ֆունկցիաները։

Գործադուլային կոմիտեն անհրաժեշտության դեպքում առաջադրում էր ներկայացուցիչներ՝ գործարանի վարչության հետ բանակցություններ վարելու նպատակով։

Բանվորական լիազորների և դիրեկտորի միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքը եղավ այն, որ «Ուրբաթ օրը՝ նոյեմբերի 25-ին ներկայացուցիչները հաղորդեցին բանվորներին, որ նրանց բոլոր պահանջները որոշ փոփոխություններով բավարարված են»[2]։

12 ժամ և ավելի տևող աշխատանքային օրվա փոխարեն գործարանատերերը համաձայնեցին, որ «բոլոր տեսակի աշխատանքների համար, առանց բացառության, սահմանվում է 9 ժամյա նորմալ բանվորական օր»[3]։

Գործարանի դիրեկցիան համաձայնում էր «բանվորների և գործարանային վարչության հարաբերությունների կանոնավորման նպատակով» հիմնել Տեսչություն, որի մեջ պետք է մտնեին պղնձահանքերի, Պիրիտիկ և Մանես գործարանների բանվորներից 9 լիազորներ և գործարանի դիրեկտորը կամ նրա լիազոր-ներկայացուցիչները։ Տեսչությունը պետք է զբաղվեր բանվորների և արհեստավորների ընդունման և հեռացման հարցերով, ինչպես նաև «դիրեկցիայի հետ համաձայնեցնելուց հետո» սահմանել նոր ընդունված բանվորների ու արհեստավորների աշխատավարձի չափը և հավելումները։

Բանվորների մասնակցությամբ տեսչության ստեղծումը գործադուլավոր բանվորների խոշոր հաղթանակներից մեկն էր։ Ըստ պայմանագրի

---

[1] „Кавказский рабочий листок", 1905, 30 ноября, № 6.

[2] Նույն տեղում, № 6։

[3] ՀԿՊ կենտկոմի արխիվ, ֆ. 40, գ. 3, թ. 13։

վերջ էր տրվում դիրեկցիայի, կապալառուների, բրիգադիրների և վարչության այլ լակեյների կամայականություններին։

Բանվորների մասնակցությամբ հիմնվում էր դատարան, որը զբաղվելու էր վիճելի հարցերով։ Տուգանքների նշանակման և գանձման հարցը լուծելու էր դատարանը և ոչ թե դիրեկցիան։ Սահմանված էր, որ «գործարանում ծառայելու ընթացքում հիվանդացած բանվորները օգտվում են ձրի բժշկական օգնությունից և դեղորայքից, ինչպես նաև հիվանդության ժամանակ ստանում են աշխատավարձի կես չափը»։

Այն բանվորները և արհեստավորները, որոնք գործարաններում կամ հանքերում աշխատել էին մի տարուց ոչ պակաս, դիրեկցիան համաձայնվում էր տալ երկշաբաթյա արձակուրդ, աշխատավարձի լրիվ պահպանումով և այլն, և այլն։

Ձեռք բերված այս նվաճումներից բանվորները օգտվեցին բավականաչափ երկար ժամանակ, մինչև որ համառուսական ռեակցիայի ուժեղացումից թևավորված գործարանատերերը կամաց-կամաց ետ խլեցին իրենց բոլոր զիջումները։

Համառուսական ռևոլյուցիոն իրադրության պայմաններում Ալավերդու դեպի զինված ապստամբություն ընթացող բանվորների նոյեմբերյան գործադուլի անվիճելի հաղթանակը օրինաչափ երևույթ էր։

Գործադուլի ընթացքում և նրանից հետո գործարանի վարչությունը ամեն միջոցի դիմեց բանվորների վճռականությունը թուլացնելու և գործադուլը ճնշելու համար։ Գործարանի դիրեկտոր Գոլմարը փորձում էր Թիֆլիսի ֆրանսիական հյուպատոսության օգնությունը ստանալով, զինված ուժով պատժել ակտիվ գործադուլավորներին և, որքան հնարավոր է, շուտ վերացնել այն զիջումները, որոնք բանվորները խլել էին գործադուլի պատճառով։ Նոյեմբերի 28-ին հյուպատոսին ուղարկած իր նամակի մեջ նա գրում էր.

«Հարդացի թևրթերում, որ Թիֆլիսի ոստիկանական կանցելյարիան տալիս է արտոնություն հրետանու պահեստից ստանալու հրացաններ 50 փամփուշտով՝ 2 1/2 ռուբ. հաշվով։ Գրեցի մեր փաստաբան պ. Գեյդեմանին մեզ համար գնել նրանցից հնարավորին չափ շատ։ Ձեզ երախտապարտ կլինեմ, եթե օգնեք նրան իր ձևոնարկելիք քայլում՝ ցանկալի արտոնություններ ստանալու համար...

Դարձյալ Ձեզ խնդրում եմ միջոցներ ձեռք առնել մեր կողակների թիվը ավելացնել տալու համար. նրանք 40-ի են հասնում այժմ»։

Այն բանից հետո, երբ ցարիզմին հաջողվեց արյան մեջ խեղդել Մոսկվայի պրոլետարիատի հերոսական դեկտեմբերյան զինված ապստամբությունը, երբ համառուսական ռևոլյուցիոն վերելքին հաջորդեց ռևոլյուցիայի աստիճանական նահանջը, երբ ցարիզմը ամբողջ Ռուսաստանում հարձակման անցավ ռևոլյուցիայի դեմ՝ բանտերն ու աքսորավայրերը լցնելով հազարավոր ու տասնյակ հազարավոր ռևոլյուցիոներներով, ռեակցիայից թևավորված բուրժուազիան սկսեց ետ վերցնել իր զիջումները, որոնք նա ստիպված էր տալու պրոլետարներին, գիջելով վերջինիս ռևոլյուցիոն գրոհի առաջ։

Այդ պայմաններում էր, որ Ալավերդու բանվորների ձեռք բերած նվաճումներն էլ աստիճանաբար հետ վերցրին։

---

1 ՀԿՊ Կենտկոմի արխիվ, ֆ. 40, գ. 3, թ. 20—21։

* * *

Ալավերդու գործարանների ու հանքերի նոյեմբերյան քաղաքական գործադուլը կոփեց բանվորներին։ Նա ցույց տվեց հայ, ռուս, վրացի ադրբեջանցի, պարսիկ և այլ բանվորների արիության, կայունության, կոփվածության, համերաշխության օրինակ։ Այդ լավ կազմակերպված գործադուլը Անդրկովկասի բանվորների քաղաքական-դասակարգային պայքարի փայլուն դրվագներից մեկն էր։ Նա լրջորեն նպաստեց նաև Լոռու երկաթուղայինների և աշխատավոր գյուղացիության քաղաքական դաստիարակման գործին։ Խոսելով մասսաների դաստիարակման գործում ռևոլյուցիոն պայքարի վիթխարի նշանակության մասին, Լենինը գրում էր.

«Մասսաների իսկական դաստիարակությունը երբեք չի կարող բաժանվել իրեն իսկ մասսայի ինքնուրույն քաղաքական և հատկապես ռևոլյուցիոն պայքարից։ Միայն պայքարն է դաստիարակում շահագործվող դասակարգին, միայն պայքարն է ցույց տալիս նրան իր ուժերի չափը, ընդարձակում նրա մտահորիզոնը, բարձրացնում նրա ընդունակությունները, պարզում նրա միտքը, կոփում նրա կամքը»[1]։

Բոլշևիկների գլխավորությամբ ռևոլյուցիոն պայքարում կոփված Ալավերդու բանվորները ցարիզմի ու ֆրանսիական կապիտալիզմի դեմ իրենց հաջորդ՝ 1906 թ. օգոստոսյան, մոտ մեկ ամիս տևող գործադուլի ժամանակ ցույց տվեցին, որ 1905 թվականին նրանց ստացած ռևոլյուցիոն կոփվածքը բավականաչափ ամուր է եղել։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 23, էջ 318։